ՄԱՀԱԳՐԱԿԱՆ

ՎԱՐԴԱՆ ԴԵՒՐԻԿԵԱՆ

(1964–2023)

Ապրիլի 13-ին կեանքի 58-րդ տարում ի Տէր ննջեց Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան պաշտօնական «Էջմիածին» հայագիտական եւ կրօնագիտական ամսագրի վաստակաշատ նախկին խմբագիր Վարդան Դեւրիկեանը: Հանգուցեալը հայրենի գիտութեան անդաստանի նուիրեալ մշակներից էր, որ տարիներ շարունակ իր հաւատարիմ ծառայութիւնն է բերել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

Կենսագրութիւն

Վարդան Դեւրիկեանը ծնուել է 1964 թ. մայիսի 18-ին Վանաձոր քաղաքում՝ արձակագիր եւ հրապարակախօս Գէորգ Դեւրիկեանի ընտանիքում:

1971–1981 թթ. սովորել է Երեւանի Ալ. Շիրուանզադէի անուան թիւ 21 դպրոցում:

1981–1986 թթ. ուսանել է Երեւանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում:

1986–1988 թթ. ասպիրանտ է եղել նոյն ֆակուլտետի հայ գրականութեան ամբիոնում:

1989 թ. յունուարին աշխատանքի է անցել Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանում:

1989–1993 թթ. եղել է «Գթութիւն» բարեգործական կազմակերպութեան «Լուսաւորիչ» թերթի խմբագրի տեղակալ, իսկ 1990 թ-ից՝ խմբագիր:

1988—1994 թթ. պարբերաբար եղել է «Հայ զինուոր» եւ «Երկիր» թերթերի յատուկ թղթակից Արցախում։ Հայաստանեան մամուլում հրատարակել է Արցախեան շարժմանը եւ պատերազմին նուիրուած հարիւրաւոր յօդուածներ։

1994 թ. փետրուար-յուլիս ամիսներին եղել է Մարտակերտի ռազմաճակատում տեղաբաշխուած 5-րդ առանձին մօտօհրաձգային կամաւորական բրիգադի օպերատիւ բաժնի աւագ սպայ, մասնակցել է Արցախի ազատագրման մարտերին, արժանացել կապիտանի աստիճանի։ Պարգեւատրուել է ՀՀ «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով։

1996 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախօսութիւն «Ղեւոնդ Ալիշանը եւ հայ հին գրականութիւնը» թեմայով եւ ստացել բանասիրական գիտութիւնների թեկնածուի գիտական աստիճան։

1993—2009 թթ. աշխատել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում. 1993—1999 թթ. որպէս «Էջմիածին» ամսագրի փոխխմբագիր, իսկ 2002—2009 թթ.՝ գլխաւոր խմբագիր, 1997—2009 թթ. եղել է նաեւ Մայր Աթոռի Ձեռագրատան վարիչ։

2009 թուականից աշխատում էր ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղեանի անուան Գրականութեան ինստիտուտում՝ նախ որպէս աւագ գիտաշխատող Հայ հին գրականութեան բաժնում, ապա՝ այդ բաժնի վարիչ, 2009 թ. դեկտեմբերի 24-ից՝ որպէս ինստիտուտի գիտական գծով փոխտնօրէն։ 2015 թ. մայիսի 4-ին ընտրուել է ինստիտուտի տնօրէն։

2013 թ. պաշտպանել է դոկտորական ատենախօսութիւն «Հայ միջնադարեան գանձերը եւ «Գանձարան» ժողովածուն» թեմայով եւ ստացել բանասիրական գիտութիւնների դոկտորի գիտական աստիճան։

Հեղինակ է աւելի քան 30 գրքի եւ 50-ից աւելի յօդուածների, որոնք տպագրուել են հայերէն, անգլերէն, ռուսերէն, ֆրանսերէն եւ ռումիներէն։